

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ Արմավիրի մարզի Ծաղկալանջ համայնքի ղեկավարի և
ավագանու կողմից 2012 թվականի կատարած աշխատանքների
մասին
Ձեկ. Համայնքի ղեկավար՝ Մ.Մկրտչյան

Հարգելի Ծաղկալանջ համայնքի բնակիչներ, հյուրեր. Ձեզ են
ներկայացնում 2012 թվականի ընթացքում գյուղապետարանի և ավագանու
կողմից կատարած աշխատանքների հաշվետվությունը:

2012 թվականի ընթացքում գյուղապետարանը և ավագանին իր
գործունեությունը իրականացրել է 2012թվականին կազմած
աշխատանքային ծրագրին համապատասխան՝ ըստ բնագավառների:
Բարելավել ենք հանդամիջյան ճանապարհները, ամիսը 4 անգամ
կատարվել է աղբաթափություն, որի համար հատկացվել է 996.000 դրամ
գումար:

Համայնքի 12,13 և 16-րդ փոցոցներում կառուցվել է խմելու ջրի 1 կմ
ջրագիծ, որի համար հատկացվել է 975.0 հազար դրամ:
Ջրամատակարարման նպատակով կատարվել է ջրաչափերի տեղադրման
աշխատանքներ՝ շուրջ 100 հատ, մյուս մասը նախատեսվում է
2013թվականի ընթացքում:

Կազմակերպվել և հաշվետվություններ են ներկայացվել
վիճակագրական ծառայությանը անասնազխաքանակի, բնակչության
սեռատարիքային շարժի, բերքահավաքի և գարնանացանի տվյալների
մասին: Եկամուտների, ծախսերի և աշխատավարձի մասին
հաշվետվություններ են ներկայացվել Արմավիրի մարզպետարան,
եռամսակային հաշվետվություններ են ներկայացվել հարկային
տեսչություն: Կադաստրի տարածքային ստորաբաժանում է ներկայացվել
շենքերի և շինությունների կառուցման և քանդման շարժի մասին:

Համայնքի դպրոցի և գյուղի երիտասարդության հետ համատեղ կազմակերպվել է երիտասարդական միջոցառում նվիրված Մայրության և գեղեցկության տոնին, որի համար 300.000 դրամ է հատկացվել: Կազմակերպվել է նաև միջոցառում նվիրված Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի 67 ամյակին և Շուշիի ազատագրման 20 ամյակին ,որի համար 450.000 դրամ է հատկացվել: Կազմակերպվել է նաև միջոցառում նվիրված գիտելիքի օրվան,հատկացվել է 150.000 դրամ:

2012 թվականի ընթացքում ստացվել և պատասխանվել է 85 գրություն: Կայացել է ավագանու 9 նիստ և քննարկվել է 27 հարց, ընդունվել է համապատասխան որոշումներ:

Համայնքն ունի 28 նպաստառու ընտանիքներ: Սոցիալապես անապահով ընտանիքներին իրենց դիմումների և ավագանու որոշմամբ տրվել է դրամական օգնություններ՝ 2000.000 դրամ:

Տարվա ընթացքում համայնքում ծնվել է 23 երեխա, արձանագրվել է 12 մահ, ամուսնացողների թիվը հասնում է 14-ի:

Ընդունվել է գյուղապետի 48 որոշում, ընդունվել է 101 դիմում, որոնք բոլորն էլ ստացել են համապատասխան լուծումներ: Համայնքի բնակչությանը տրվել է համապատասխան ոլորտի 657 տեղեկանքներ:

2012 թվականին բնակիչներից գանձվել է 4.710.9 հազ. դրամ հողի հարկ, 1815.3 հազ. դրամ գույքահարկ և վարձակալական հողի վարձավճար 690.0հազ. դրամ:Պլանային առաջադրանքը կատարվել է .հողի հարկի գծով 99.35% , գույքահարկի գծով 100 %, վարձակալական հողի վարձավճարը 100 %:

Գյուղապետարանը աշխատավարձի պարտք չունի:

Գյուղում կան մի շարք հիմնախնդիրներ, որոնց վերաբերյալ կցանկանայի տեղեկացնել Ձեզ և մարզպետարանի ներկայացուցչին, քանզի նշված խնդիրները գյուղապետարանի միջոցներով հնարավոր չէ իրականացնել.

1. Մշակույթի տունը վերակառուցման և վերանորոգման անհրաժեշտություն ունի, բնակչությունը մշակութային միջոցառումներ չեն կարող կատարել, անգամ իր ազատ ժամանակը սովորական խաղերով անցկացնելու վայր չունի
2. Չի գործում մանկապարտեզը՝ համապատասխան շենքային պայմանների բացակայության պատճառով, նախկին շենքը կարիք ունի վերանորոգման

Ներտնտեսային ոռոգման ցանցը գրեթե ամբողջությամբ հողային հունով է, կորուստը մեծ է և այն հանգեցնում է գերծախսի ջրօգտագործողների արդարացի դժգոհությանը:

Գյուղում կատարվող բոլոր երևույթները գյուղապետարանի ուշադրության կենտրոնից դուրս չեն մնում, կա սերտ կապվածություն գյուղացու և գյուղապետարանի միջև: Սիրելի համագյուղացիներ Ձեր բոլոր գրավոր և բանավոր դիմումները և խնդրանքները քննարկվում են և հնարավորության սահմաններում տրվում են համապատասխան լուծումներ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Մ. ՄԿՐՏՉՅԱՆ